«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Լալայան Աստղիկ Վոլոդյայի

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ, ք. Արտաշատ
Հ. Ճգնավորյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1 ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

1.1 Ծնողական դերի գիտակցման եւ ձեւավորման մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները.....5

1.2 Ուսուցչի եւ ծնողների համագործակցությունը՝ սովորողների սոցիալականացման նպատակով.....7

1.3 Ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքի ժամանակակից ձեւերն ու մեթոդները դպրոցում.....11

ԳԼՈՒԽ 2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1 Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, փուլերը.....15

2.2 Արձանագրող՝հիմնախնդրի առկա վիճակը.....16

2.3 Ձեւավորող հետազոտության ընթացքը……..20

2.4 Ստուգիչ հետազոտական աշխատանքի արդյունքների համեմատական վերլուծություն.....24

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....26

Առաջարկություններ.....27

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Ծնողական դերի գիտակցման խնդիրը առավել կարեւորվում է այս հիմնախնդրի վերաբերյալ ոչ միանշանակ ընկալման հետ կապված: Ծնողական զգացմունքների եւ փոխհարաբերությունների հարցը կենցաղային մակարդակում շատ պարզ է եւ ենթադրում է ծնողների կողմից հասարակական պահանջի, վերարտադրողական գործառույթի եւ երեխաների խնամքի ու դաստիարակության իրականացում: Սակայն ծնող դառնալու ֆիզիոլոգիական պատրաստվածությունը, կենսաբանական պահանջը ոչ միշտ է հոգեբանական եւ մանկավարժական համապատասխանում նրա հոգեբանական պատրաստվածության հետ:

Ծնողական դերի գիտակցման հարցը քննարկվել են Ա. Ի. Անտոնովի, Ա, Յա. Վարգայի, Լ. Ֆ. Օբուխովայի, Լ.Բ. Շլայդերի, Մ.Միդի, Ի.Ս. Կոնի եւ այլոց աշխատություններում: Յուրաքանչյուր մարդու կյանքում ծնողները մեծ դեր են խաղում՝ նրանցից է կախված երեխաների երջանկությունը, ֆիզիկական եւ հոգեբանական առողջությունը, դաստիարակության որակը:

Անձի ձեւավորման մեջ ծնողական դերի գիտակցման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները լիարժեք ուսումնասիրելու եւ բացահայտելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել այդ համակարգը ամբողջության մեջ՝ (հայր եւ մայր) ուսումնասիրելով այս ամբողջությունը կազմող կառուցվածքային տարրերը:

Ընտանիքում երեխայի դաստիարակության որակով, ծնողական դերի գիտակցված իրականացմամբ է որոշվում հասարակության վիճակը: Այս ամենի ամբողջական ուսումնասիրումը կօգնի դպրոցում ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը: Սրանով է պայմանավորված թեմայի

արդիականությունը:

Հետազոտության նպատակը

Ուսումասիրել ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի ձեւերն ու միջոցները որպես սովորողների զարգացման ու դաստիարակության պայման:

Հետազոտության խնդիրները

1. Ուսումնասիրել եւ հիմնավորել ծնողներին մանկավարժական գիտելիքներով զինելու անհրաժեշտությունը դպրոցական զարգացման գործընթացում:
2. Վերլուծել ծնողական դերի գիտակցման մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները:
3. Մշակել դպրոցում ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի կազմակերպման ձեւեր ու միջոցներ:
4. Ստուգել ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը սովորողների դաստիարակության գործընթացում:

Հետազոտության մեթոդները.

1. Հիմնախնդրի շուրջ տեսամեթոդական գրականության ուսումնասիրում եւ վերլուծություն
2. Դիտում
3. Զրույց

Հետազոտության նշանակությունը

Դպրոցում ծնողների հետ կազմակերպվող մանկավարժական աշխատանքի ժամանակակից ձեւերն ու միջոցները միջոցները կնպաստեն ծնողական դերի լիարժեք գիտակցմանը, դպրոցական տարիքի երեխաների համակողմանի դաստիարակությանը:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, գրականության ցանկից եւ հավելվածից:

Աշխատանքի ծավալը կազմում է 30 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ 1 ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

1.1 Ծնողական դերի գիտակցման եւ ձեւավորման մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները

Ծնողական դերը որպես ամբողջական համակարգ – ենթադրում է ծնող հասկացությունը ընկալել հոր եւ մոր միասնությամբ: Այսինքն անկախ արտահայտման մակարդակից ծնող հասկացությունը ներառում է ամուսինների միասնություն (կին, տղամարդ) եւ ենթադրում է ծնողական դերը կազմող բաղադրիչների /ճանաչողական, հուզական եւ վարքային/ միասնական կիրառում:

Ծնողական դերի ընկալման նախնական փուլում տեղի է ունենում ծնողական պարտականությունների, գործառույթների, խնամքի, դաստիարակության կաղմակերպման համաձայնեցում: Այսինքն, տեղի է ունենում ծնողական դերի տեսական գիտակցում: Մինչ երեխայի ծնվելը այս դերի գիտակցումը իրականանում է զրույցների, երազանքների, ապագայի հետ կապված պլանների քննարկման միջոցով:

Այսպիսով, ծնողական դերի գիտակցման նախնական մակարդակն ունի անկայուն կառուցվածք, չկան հստակ պատկերացումներ ընտանեկան դաստիարակության, ընտանեկան արժեքների, ծնողական փոխհարաբերությունների, զգացմունքների, դիրքի, - պատասխանատվության, ակնկալիքների եւ սպասումների

վերաբերյալ [16, 38]

Ծնողական դերի գիտակցման հաջորդ փուլը տեղի է ունեում երեխայի ծնվելուց հետո, այն ունի առավել զարգացած ձեւ, բնութագրվում է հարաբերական կայունությամբ եւ իրականացվում է ամուսինների ծնողական դերի մասին միասնական պատկերացումների, փոխադարձ համաձայնության հիման վրա: Ծնողներն առավել լրջությամբ են վերաբերվում իրենց դերին:

Ծնողական միասնական հոգեբանական համակարգ կազմված է հետեւյալ մասերից.

1. Ընտանեկան արժեքներ՝ սեփական եւ ծնողական ընտանիքի գիտակցում:
2. Ծնողական վերաբերմունք՝ ընտանիքում երեխայի հետ ճիշտ փոխհարաբերությունների կառուցում, երեխայի անձի նկատմամբ հարգանք:
3. Ծնողական զգացմունքներ՝ ընտանիքի անդամների զգացմունքները հասկանալու ունակությունների ձեւավորում :
4. Ծնողական դիրքորոշում՝ երեխայի հետ փոխգործունեության ապահովում:
5. Ծնողական պատասխանատվություն՝ պատասխանատվություն սեփական վարքի հանդեպ:
6. Ընտանեկան դաստիարակության ոճ ծնողի վարքային մոդելի ընդունում երեխային տրվող ազատության վերաբերյալ պատկերացումներ:

Այս ամենը իրականացնելու եւ ընտանիքում կիրառելու համար անհրաժեշտ է կազմակերպել ծնողական կրթություն՝ ծնողների զինել զինել մանկավարժական

գիտելիքներով, հմտություններով, կարողություններով:

Ընտանիքում ծնողները ոչ հաճախ են ունենում մանկավարժահոգեբանական գիտելիքներ, չեն կարողանում իրենց եւ երեխայի միջեւ ճիշտ հարաբերություններ հաստատել, չեն տիրապետում անձի զարգացման համար բավարար գիտելիքների: Այդ է պատճառը, որ դպրոցական եւ նախադպրոցական կրթության համալիր ծրագրերը նախատեսված տարբեր տարիքի երեխաների համար, ոչ միայն նախատեսում են կրթադաստիարակչական աշխատանք երեխաների հետ, այլեւ որոշակի աշխատանք ծնողների հետ: [2, 42-43]

Դ. Կլիզը, Ռ. Սկիներրը մատնանշում են սեփական եւ զուգընկերոջ ընտանիքի ֆունկցիոնալ եւ պրոբլեմային նմանությունները: Վ.Վ. Բոյկոն մարդու վերարտադրողական վարքագծի վերաբերյալ առանձնացնում է գործոնների խմբի երեք հիմնական տեսակ.

1. Սոցիալ-հոգեբանական հարմարվողականություն (կանանց զբաղվածություն, կրթություն եւ մշակույթ, հասարակության տնտեսական զարգացում)
2. Ծնելիության գործոնների սոցիալ-հոգեբանական հարմարեցում ընտանեկան մակարդակի (ընտանեկան - գործառույթների բովանդակություն, ընտանիքի կենսակերպի կառուցվածք, միջընտանեկան հարաբերություններ, ամուր ամուսնություն, ամուսինների վերաբերմունքը հղիությանը, երեխաների թվաքանակին եւ սեռին որպես ամուսնության կայունության նախապայման)
3. Ծնելիության գործոնների սոցիալ-հոգեբանական հարմարեցում մինչեւ անձնային մակարդակի (երեխաների անհրաժեշտություն, վերարտադրողական դրդապատճառներ, անհատական անձնային որակներ, երեխաների եւ սեփական անձի արժեւորում):

Ծնողական դերի կազմավորման գործոնները կարելի է բաժանել արտաքինի եւ ներքինի: Առաջինը պայմանավորված է արտաքին ներգործությունների համընդհանրությամբ, որոնք կարելի է բաժանել մի քանի մակարդակների:

Ներքին գործոնները անհատի առանձնահատկություններն են եւ մարդու անհատականությունը: Ներքին եւ արտաքին գործոնները կարելի է համադրել վերոնշյալ մակարդակների հետ: [15, 48]

1.2 ՈՒսուցչի եւ ծնողների համագործակցությունը՝ սովորողների սոցիալականացման նպատակով

Սոցիալականացումը մարդու ինտեգրումն է կամ միավորումը իր միջավայրին: Տեղին է անված, որ մարդը հասարակական հարաբերությունների կամ սոցիալական միջավայրի արդյունք է: Մարդու փոխազդեցությունը հասարակության հետ նշանակում է՝

սոցիալականացում: Մարդը սոցիալականացվում է հասարակության հետ, ուրիշ մարդկանց հետ հաղորդակցվելու միջոցով:

Մարդու անձի սոցիալականացումը բացահայտվում է ադապտացիա հասկացության միջոցով, որը նշանակում է հարմարվել միջավայրի պայմաններին: Սոցիալականացումը մարդու մուտքն է սոցիալական միջավայր եւ նրա հարմարվելը մշակութային, հոգեբանական, սոցիոլոգիական պայմաններին, բարոյական նորմերին: Սոցիալական փուլերը կարելի է բաժանել այսպես.

Առաջին կամ վաղ փուլն ընդգրկում է երեխայի ծննդից մինչեւ դպրոց ընդունվելը եւ ապա՝ ամբողջ դպրոցական ուսուցումը:

Երկրորդ փուլն ընդգրկում է մարդու հասունացումը եւ աշխատանքային գործունեությունը:

Երրորդ փուլը սկսվում է անձի աշխատանքային գործունեության դադարեցումից, անձի տարեց տարիքում:

Անձի ձեւավորման գործում կարեւոր դեր են կատարում անձի սոցիալականացման եւ ձեւավորման գործոնները:

Սոցիալական են կոչվում այն գործոնները, որոնցում առկա են կամ ստեղծվում են համապատասխան պայմաններ անձի սոցիալականացման համար: Սոցիալականացման հիմնական գործոնները միավորվում են 3 խմբերում.

Մակրո (մեծ կամ խոշոր) գործոններ. դրանց շարքին են դասվում տիեզերքը,Երկիր մոլորակը, աշխարհը, հասարակությունը, պետությունը,որոնք ներգործում են անձանց վրա, բնակիչների բոլոր խմբերի վրա:

Մեզո (միջին) գործոններ. դրանց մեջ են ընդգրկվում էթնոսը, այն բնակավայրը, ուր ապրում են մարդիկ՝ ռեգիոնը, գյուղը, քաղաքը, ավանը, զանգվածային տեղեկատվության միջոցներ (ռադիոն, հեռուստատեսությունը, կինոն, ներկայացումը, լրագրերը, գրականությունը եւ այլն):

Միկրո (փոքր) գործոններ. դրանց շարքին են դասվում մարդկանց վրա անմիջականորեն ներգործող միջոցները: Օրինակ՝ ընտանիքի անդամները հասակակիցները, միկրոսոցիումը, կազմակերպությունները, որոնց միջոցով իրականացվում է սոցիալական դաստիարակությունը կամ ուղղակի սոցիալականացումը:

Դպրոց–ընտանիք համագործակցության համակարգում այսօր հիմնականում կիրառվում են ինչպես ծնողների հետ մշտական հանդիպումները, այնպես էլ ծնողական ժողովները, ծնողների հետ անհատական խորհրդատվությունը եւ աշխատանքը ծնողկոմիտեի հետ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի այն ձեւն է, որի լուծվում են դպրոցականների դաստիարակության, ուսուցման եւ միջոցով լուծվում

կազմակերպչական հիմնախնդիրները: Առավել արդյունավետ են համակցված ծնողական ժողովները, որտեղ իրականացվում են ծնողների մանակավարժական են մանկավարժական կոլեկտիվի կատարած լուսավորություն, վերլուծվում աշխատանքի արդյունքները, նախանշվում հետագա նպատակներն ու խնդիրները:

Յուրաքանչյուր մանակավարժ երեխայի ուսուցումն ու դաստիարակությունը պետք է կառուցի կոնկրետ տվյալ երեխայի - ընտանեկան դաստիարակության ուսումնասիրման հիման վրա դրա դրական կողմերը հզորացնելու եւ բացասական կողմերը չեզոքացնելու նպատակով: Չէ որ ընտանեկան դաստիարակությունը հիմքն է երեխայի հետագա զարգացման համար:

Ծնողական ժողովների ընթացքում դիտարկվում են դպրոցի կամ տվյալ դասարանի առաջադիմության եւ վարքագծի խնդիրները, պլանավորվում եւ քննարկվում են երեխաների դաստիարակության իրականացման ուղիները, որոշակիացվում են դպրոցի եւ ծնողների համագործակցության ձեւերը, ամփոփվում են միջոցառումների կամ այլ աշխատանքների արդյունքները եւ այլն:

Երեխայի համար մանկապարտեզի եւ դպրոցի ճիշտ ընտրություն կատարելու համար պետք է

- Նախապես նախաձեռնել << ծնող- երեխա-մանկապարտեզ >> հանդիպում , որը կօգնի եւ երեխային, եւ ծնողին ընտրության եւ շահագրգիռ կողմերի համագործակցության հարցերում,
- Հերթագրել երեխային տվյալ մանկապարտեզում կամ դպրոցում,
- Զրուցել դաստիարակի հետ ՝ աջակցելով նրան երեխայի համար հարմարավետ միջավայր ստեղծել,
- Հանդիպել եւ զրուցել այն երեխաների եւ նրանց ծնողների հետ, որոնք դպրոցի տարածքում են ապրում պարզելու համար նրանց կարծիքը տվյալ նախադպրոցական հաստատության կամ դպրոցի մասին, եւ ծանոթանալու այդ հաստատության առանձնահատկություններին,
- Ընտրել բնակավայրին մոտ հաստատություն,
- Ուշադիր ուսումնասիրել դպրոցի կայք-էջը,,
- Նկատի ունենալ, որ նորակառույց ուսումնական հաստատությունը ոչ միշտ է համապատասխանում <<լավ մանկապարտեզ կամ դպրոց >> բնորոշմանը,
- Կարեւորել երեխայի հնարավորությունները, ընդունակություններն ու հակումները եւ դրանք ընդունել որպես նախապայման ուսումնական հաստատության ընտրության ժամանակ:

Դարերի ընթացքում երեխաների դաստիարակությունն իրականացվել է ինչպես **ընտանիքում**, այնպես էլ տարբեր հասարակական հաստատություններում: Երեխաների դաստիարակության գործում ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային օղակի ունեցած կարեւոր դերն անժխտելի է:

Յուրաքանչյուր ընտանիք տարբերվում է մյուսներից իր կառուցվածքով, խնդիրներով, ավանդույթներով, սովորույթներով, հետաքրքրություններով, արժեքներով, բարքերով, կրթության տարբեր հնարավորություններով: Յուրաքանչյուր դպրոց նման է մյուսներին ընդհանուր ռազմավարությամբ, կանոնակարգով, ծրագրերով եւ արժեքային համակարգով: Ուստի անհրաժեշտ է ծնող – մանկավարժ փոխհարաբերությունները կառուցել այնպես, որ կարեւորված լինի ծնողի պատվերը եւ երեխայի կարողությունները՝ հաշվի առնելով նրա հնարավորությունները: Անհրաժեշտ է նաեւ կրթել եւ զարգացնել ծնողներին, քանի որ, նաեւ նրանց իրազեկության եւ կրթության մակարդակով է պայմանավորված նաեւ երեխայի զարգացման որակը: [17, 53]

Մանկավարժության մեջ երեխայի դաստիարակության գործում բացառիկ նշանակություն է տրվում ընտանիքին, մասնավորապես ՝ գրագետ մոր դերին: Այստեղից էլ բխում է այն համոզմունքը, որ ծնող լինելն առաջին հերթին մեծ պատասխանատվություն է:

Մանկավարժները սովորաբար մշտական կապ են պահպանում երեխաների ընտանիքների հետ: Նրանք երեխաների դաստիարակության մեջ հենվում են ընտանիքի վրա, համագործակցում ծնողների հետ, մշակում համատեղ ծրագրեր եւ գտնում դրանց իրականացման արդյունավետ եղանակներ: Բացի այդ՝ դասվարի եւ ընտանիքի ընդհանուր ջանքերն այն դեպքում ցանկալի արդյունքների կհասնեն, երբ ընտանիքն իմանա, ինչ է անում դպրոցը, իսկ դպրոցն էլ ՝ թե ինչ պայմաններում եւ ինչպես են դաստիարակվում երեխաներն ընտանիքում:

1.3 Ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքի ժամանակակից ձեւերն ու մեթոդները դպրոցում

Ծնողների մանկավարժական կրթության ընդլայնումը ժամանակակից դպրոցի գործունեության կարեւոր ուղղություններից մեկն է: Այն կրում է համագործակցության հատուկ բնույթ, քանի որ թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակության տեսակետից փոխվել են ծնող- մանկավարժ փոխհարաբերությունները:

Ծնողների մանկավարժական կրթության բարելավումը անհրաժեշտ է ելնել հետեւյալ խնդիրներից.

1. Ուսումնական հաստատությունը եւ ընտանիքը դարձնել երեխաների դաստիարակության համախոհներ:
2. Ապահովել լիարժեք փոխհամաձայնություն եւ փոխըմբռնում դպրոցի եւ ընտանիքի միջեւ:
3. Բացառել ընտանիքի հնարավոր բացասական ազդեցությունները երեխայի վրա:
4. Անդրադառնալ ընտանեկան դաստիարակության խնդիրներին բացահայտել,

աջակցել եւ զարգացնել ընտանիքի դաստիարակության ներուժը:

Մանկավարժներին հայտնի է, որ ծնողների մանկավարժական կրթության բարելավման կարեւոր գործոն է հաղորդակցման ժամանակակից մեթոդների կիրառումը ընտանեկան դաստիարակության խնդրահարույց իրավիճակների ներկայացում, խաղային համագործակցություն ծնողների եւ երեխաների միջեւ, ծնողների վարքագծի դրսեւորման մոդելավորում, ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակում:

Ծնողների մանկավարժական կրթության կազմակերպման ուղղություններն են.

- Դասախոսութուններ՝ դաստիարակության այս կամ այն խնդրի բացահայտման եւ հոգեբանամանկավարժական աջակցման ձեւ է:
- Կոնֆերանսներ՝ նախատեսում է երեխաների ուսուցման եւ դաստիարակության մասին գիտելիքների ընդլայնում, խորացում եւ ամրապնդում:
- Մանկավարժական բանավեճ հնարավորություն է ստեղծում ներկաների ուշադրությունը հրավիրել քննարկվող խնդիրների վրա:
- Դերային խաղեր համատեղ ստեղծագործական գործունեության ձեւ է, որի նպատակն է ուսումնասիրել մասնակիցների մանկավարժական կարողությունների ձեւավորման մակարդակը:
- Թեմատիկ սեմինարներ՝ նպատակը - երեխաների դաստիարակության փորձի փոխանակումն է, գրավում է ծնողական եւ մանկավարժական հասարակայնության ուշադրությունը:
- Հարց ու պատասխանի երեկոներ՝ ծնողների հարցերին պատասխանում են հրավիրված մասնագետներ՝ հոգեբաններ, իրավաբաններ, մանկավարժներ, բժիշկներ, լոգոպեդներ, հատուկ մանկավարժներ:
- Անհատական աշխատանք ծնողների հետ:
- Մանկավարժի եւ ծնողների համագործակցության խմբային ձեւեր:
- Ծնողական ակումբ՝ պահանջում է հատուկ նախապատրաստում, իրականացվում է հանդիպումների ձեւով, նպատակն է հետաքրքրել ծնողներին քննարկվող դաստիարակչական հարցերի շուրջ:

Այսօր զարգանում եւ իրականացվում է ընտանիքի եւ դպրոցի փոխգործունեության նոր փիլիսոփայություն, որի հիմքում ընկած է այն գաղափարը, որ երեխաների դաստիարակությունը կրում է ծնողների պատասխանատվությունը, իսկ մյուս սոցիալական ինստիտուտները կոչված են աջակցելու եւ լրացնելու նրանց կրթադաստիարակչական գործունեությունը: [10, 64]

Դպրոցի եւ ընտանիքի միջեւ հարաբերությունները որոշվում են հետեւյալ հասկացություններով՝ համագործակցություն, փոխգործունեություն,սոցիալական ընկերակցություն, որտեղ կարեւոր պայմանը ծնողների դերն է:

Նշենք, թե ինչով է պայմանավորված այդ դերը.

- Բարձրացնել ծնողների մանկավարժահոգեբանական գրագիտության

մակարդակը:
- Ծնողների ընդգրկել մանկավարժական գործընթացի կազմակերպման աշխատանքներին:
- Ծնողների եւ մանկավարժների համատեղ աշխատանքում դրական, հուզական վերաբերմունքի դրսեւորում:
- Համատեղ իրականացնել դպրոցի եւ ընտանիքի գործունեության ծրագիր ուղղված երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը:

Դպրոց-ընտանիք աշխատանքների կազմակերպման միջոցներն են

- Պաստառներ ծնողների համար՝ <<Մեր հաջողությունները>>
- Բաց դռների օրեր - էկսկուրսիա դպրոցում, դասաժամերի դիտում, ժամանցի կազմակերպում
- Խորհրդատվություն հեռախոսով – ծանոթացում ծնողներին դպրոցի աշխատանքի բովանդակության տարբեր կողմերի հետ:
- Անկետավորում – դպրոցի կրթական եւ առողջապահական խնդիրների շուրջ պահանջմունքների բացահայտում (<<Ի՞նչ սպասելիքներ ունեք դպրոցից>>, <<Բավարարվա՞ծեք դպրոցի գործունեությունից>>, <<Ինչպիսի՞ գործնական օգնության կարիք ունեք>>):
- Մանկավարժական հայացքների տարածում - տեղեկատվական պաստառներ, երեխաների եւ ծնողների համար ցուցահանդեսներ, թեմատիկ - գեղարվեստական միջոցառումներ:
- Ծնողական ժողովներ ընդհանուր եւ խմբային:
- Մեթոդական միջոցառումներ կլոր սեղան <<Երեխայի իրավունքները>>, բանավեճ՝ պատիժ, խրախուսանք:
- Ժամանց ծնողների մասնակցությունը տոնական ցերեկույթների նախապատրաստմանը <<Առողջության օր>>, <<Ուրախների եւ հնարամիտների ակումբ>>, <<Մեծերը երեխաների համար>>, <<Հայրիկը, մայրիկը, ես՝ Սպորտային ընտանիք>>:
- Դպրոցի բարեկարգմանն ուղղված աշխատանքներ՝ շաբաթօրյակներ, զարգացնող առարկայական միջավայրի ստեղծման աշխատանքներ:

Այսպիսով, դպոցում ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքի համակարգված ձեւերն ու միջոցները - բարելավում են ծնողների մանկավարժական կրթության մակարդակը՝ ի նպաստ երեխաների համակողմանի դաստիարակության եւ ընդհանուր զարգացման: [4, 67-82]

ԳԼՈՒԽ 2

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2. 1 Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, փուլերը

Փորձարարական հետազոտության ընթացքում ուսումնասիրել ենք ծնողների վերաբերմունքը եւ գնահատականը ընտանեկան դաստիարակության վերաբերյալ, նրանց մանկավարժական գիտելիքները երեխայի զարգացման գործընթացում: Մեր հետազոտությունն անց ենք կացրել Արտաշատ քաղաքի Հայկազ Ճգնավորյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցում: Հետազոտության ընդգրկված են եղել 30 աշակերտ, ինչպես նաեւ 35 ծնող:

Հետազոտությունն անց ենք կացրել երեք փուլերով արձանագրող, ձեւավորող, ստուգիչ:

Արձանագրող փուլում ներկայացված են անցկացրած դիտարկումների, զրույցների արդյունքները: Դիտումներն անց են կացվել օրվա կարգացույցի բոլոր պահերին, գործունեության տարբեր ձեւերի ընթացքում դասաժամեր, խաղեր, միջոցառումներ եւ այլն: Յուրաքանչյուր երեխայի եւ ծնողի հետ տարվել է անհատական զրույց՝ դիտարկման արդյունքները փաստելու նպատակով: Այս փուլում բացահայտվեց ծնողների մանկավարժական գիտելիքների տիրապետման մակարդակը: Հարցարանի միջոցով որոշվեց նրանց ձգտումը տիրապետելու դպրոցականի զարգացման առանձնահատկություններին եւ դաստիարակության օրինաչափություններին:

Ձեւավորող փուլում ներկայացված է մեր կողմից իրականացված աշխատանքը ուղղված ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների տարածմանը համապատասխան մեթոդներով եւ միջոցներով:

Ստուգիչ փուլում ներկայացված է նպատակաուղղված մանկավարժական աշխատանքից հետո ստացված արդյունքների համեմատությունն ու վերլուծությունը:

Հետազոտական աշխատանքի ընթացքում մեր առջեւ դրել ենք հետեւյալ խնդիրները.

- Պարզել ծնողների վերաբերմունքը երեխաների նկատմամբ անավարտ նախադասությունների միջոցով:
- Ծնողների հետ սեմինար անցկացնել՝ երեխաների դաստիարակաության գործընթացում նրանց գիտելիքների հարստացման նպատակով:

- Բարձրացնել ծնողների իրազեկվածությունը երեխաների զարգացման առանձնահատկությունների եւ օրինաչափությունների վերաբերյալ:

Օգտվել ենք դիտման, հարց ու պատասխանի, զրույցի, անկետավորման մեթոդներից, մշակել ու կազմել ենք հարցարաններ ծնողների համար, անցկացրել ենք թեմատիկ զրույցներ, տվել ենք մանկավարժական համապատասխան գիտելիքներ երեխաների զարգացման առանձնահատկությունների շուրջ, խորհուրդներ ծնողներին, թեստեր ծնողների համար <<Ինչպես դաստիարակել>>, <<Ինչպիսի ծնող եք>>, <<Ճանաչեք երեխային նրա նկարած նկարի օգնությամբ>>, ներկայացրել ենք վարքագծային շեղումներ ունեցող երեխաների վարքի շտկմանն ուղղված խորհուրդներ:

Երեխաների հետ անցկացրել ենք հետեւյալ մեթոդիկաները <<Նկարիր ընտանիքիդ անդամներին>>, <<Որ - գույնը ում կնվիրես>>, <<Ընտանիքը երեխայի աչքերով>>: Դասերի եւ խաղերի ժամանակ դիտել ենք երեխաների վարքը, շփումը, զրուցել ենք երեխաների հետ նրանց դիրքորոշումը ընտանիքի անդամների, մասնավորապես մոր եւ հոր հանդեպ բացահայտելու նպատակով:

2.2 Արձանագրող փուլ

Դիտման եւ զրույցի միջոցով պարզեցինք, թե ինչպիսի փոխհարաբերությունների մեջ են գտնվում ծնողը եւ երեխան: Պարզեցինք, որ ծնողների մեծամասնությունը աշխատում է, որի պատճառով չի կարողանում հնարավորինս շատ ժամանակ տրամադրել երեխային, որի պատճառով երեխաների վարքագծում երբեմն նկատվում է կամակորության, անկարգապահության, ագրեսիվության եւ այլն:

Հաճախ ծնողները փորձում էին պատասխանատվությունը դնել մանկավարժների, հոգեբանների վրա: Լինում էին դեպքեր, երբ ծնողները պնդում էին իրենցը ելնելով միայն իրենց երեխաների շահերից, հաշվի չառնելով մյուս երեխաների իրավունքներն ու ցանկությունները: Երեխաների արտահայտություններից ակնհայտ էր դառնում, թե ինչպես է իրականացվում նրանց ընտանեկան դաստիարակությունը Օրինակ <<Հայրիկս ասում է, որ ես միշտ պետք է լինեմ գլխավորը>>: Կային նաեւ երեխաներ, որոնց համար միեւնույն էր, թե ինչ դեր կտային իրեն, չէին հիշատակում ծնողներին:

Ծնողների հետ համապատասխան հարցումներ կազմակերպելուց հետո, արձանագրող փուլի վերլուծությունից եկանք հետեւյալ եզրահանգման.

Ծնողների 25-30%-ը ունեին մանկավարժական կրթություն եւ երեխաների հետ իրականացնում էին համապատասխանաբար ճիշտ դաստիարակչական աշխատանք կամ չունեին կրթություն սակայն զբաղվում էին ինքնակրթությամբ օգտվելով մասնագիտական տարբեր աղբյուրներից: Սա համարենք բարձր մակարդակի:

Ծնողներից 15-ը չունենալով մանկավարժական կրթություն, այնուամենայնիվ կապի մեջ էին ուսուցչի հետ, հետեւում էին երեխաների առօրյային դպրոցում: Սա դիտարկում ենք որպես միջին մակարդակ:

Ցածր մակարդակում հայտնվեցին ծնողների 55%-ը, ովքեր չունեին մանկավարժական կրթություն եւ երեխաների դաստիարակության խնդիրները տեսնում էին միմիայն ուսուցչի եւ դպրոցի գործունեության մեջ:

Արձանագրող փուլում ծնողների շրջանում կիրառեցինք <<Անավարտ նախադասությունների շարունակություն>> մեթոդիկան:

Վերլուծելով անավարտ նախադասությունների մեթոդիկան, եկանք այն եզրահանգման, որ հարցմանը մասնակցած ծնողներից 6 ծնող ունեն մանկավարժական գիտելիքների տիրապետման բարձր մակարդակ (20%), 10 ծնող ունի միջին մակարդակ (33%), իսկ 14 ծնող ունի ցածր մակարդակ (47%):

Արձանագրող փուլում երեխաների հետ անցկացրել ենք <<Ճանաչենք երեխային նրա նկարած նկարի օգնությամբ>> թեստը, մանսնակցել է 30 երեխա: Երեխաներին խնդրեցինք նկարել յուրաքանչյուրը իր ընտանիքը: Խնդրեցինք նաեւ, որ նրանք ընտանիքի անդամներին նկարեն որեւէ գործողություն կատարելիս:

Թեստի միջոցով բացահայտվում է, թե ինչ վերաբերմունք ունի երեխան իր ընտանքիքի անդամների հանդեպ, թե ինչ մթնոլորտում է մեծանում երեխան, ինչպիսի հուզական վերաբերմունք է դրսեւորում ընտանիքի անդմաների հանդեպ: Աշխատանքի ավարտից հետո, խնդրեցինք, որ երեխաները պատմեն իրենց նկարի մասին: Այնուհետեւ վերլուծեցինք իրենց կատարած աշխատանքները:

Առաջինը եւ ամենից մեծը երեխան պատկերում է իր կարծիքով ամենակարեւոր մարդուն: Իրենք իրենց երեխաները նկարում են այն մարդու կողքին ում հետ ավելի են կապված, հեռվում կամ նկարի անկյունում նկարում են ոչ այնքան սիրելի մարդուն, կամ նրան ընդհանրապես չեն նկաեւում: Մարդուն մեջքով պատկերելը նույնպես բացասական վերաբերմունքի նշան է: Հինգ երեխա ընտանիքի անդամներին նկարել էր տանը՝ ընդհանուր գործով զբաղված. Դա խոսում է ընտանիքում տիրող ջերմ մթնոլորտի մասին: Տասնմեկ երեխա իրենց հեռու էին նկարել իրենց ընտնաիքի անդամներից: Դա նշանակում է, որ երեխան իրեն օտարացած է զգում: Երբեմն երեխան նկարում մոռացել էր նկարել ինքն իրեն: Երբ հարցրինք, թե ինչու ստացանք հետեւյալ պատասխանները նկարի մեջ տեղ չկար, հետո կնկարենք: Ստացվում է, որ ընտանիքում նրա համար իսկապես,,տեղ չկա,, կամ անուշադրության է մատնված:

Ընտանիքի բոլոր անդամներին պատկերելը գնահատվում է որպես բարձր մակարդակ (6 երեխա, 20%), միայն մեկ կամ երկու անդամի բացակայությունը միջին մակարդակ (7 երեխա, 23%), ընտանիքի անդամների մեծամասնության եւ հենց երեխայի բացակայությունը գնահատվում է որպես ցածր մակարդակ (17 երեխա,

57%):<<Ճանաչենք երեխային նրա նկարած նկարի օգնությամբ>> թեստի արդյունքները ներկայացնենք թիվ 2 գծապատկերի տեսքով:

Երեխաների հետ անցկացրեցինք <<Ընտանիքը երեխայի աչքերով>> թեստը:

1. Ում հետ ես ապրում:
2. Քեզ դուր է գալիս ժամանակն անցկանցնել տանը: Ուզու՞մ ես դպրոցից շուտ տուն գնալ:
3. Ծնողներդ հաճախ են զրուցում քեզ հետ:
4. Ինչպես են նրանք զրուցում քեզ հետ սիրալիր, թե կշտամբանքով:
5. Դու ապահով ես զգում քեզ տանը, չես վախենում:
6. Ինչ ես կարծում, ինչ է սիրում անել մայրիկդ ամենաշատը, իսկ հայրիկդ:
7. Ծնողներիցդ ով է ամենաշատը խաղում, զրուցում, նկարում քեզ հետ, գրքեր կարդում քեզ համար:
8. Եթե դու ինչ-որ բան կոտրում ես, ով է օգնում քեզ նորոգելու այն, թե կշտամբում են:
9. Եթե դու ինչ-որ բանից վիրավորվել ես ու տխրել, ում կպատմես առաջինը մայիրկիդ թե հայրիկիդ:
10. Շաբաթ եւ կիրակի օրերին, ամենից շատ ինչ ես սիրում անել:
11. Հաճախ ես ծնողներիդ հետ գնում զբոսանքի:

<<Որ գույնն ում կնվիրես>> մեթոդիկայի միջոցով փորձել ենք պարզել, թե երեխան ինչ վերաբերմունք ունի ծնողների, ընտանիքի մյուս անդամների, հասակակիցների եւ ուսուցչի նկատմամբ: Յուրաքանչյուր գույն խորհրդանշում է որեւէ հոգեվիճակ: Երեխաներն այդ մասին չգիտեին, սակայն ենթագիտակցաբար նրանք իրենց սիրելի ու հարազատ մարդկանց նվիրեցին ջերմ ու պայծառ գույներ:

2. 3 Ձեւավորող փուլ

Ընտանեկան դաստիարակության անհաջողությունների պատճառները թաքնված են ուսումնադաստիարակչական աշխատանքին ծնողների պատրաստ չլինելու, երեխայի հոգեկան զարգացման գործընթացները եւ հասարակության առջեւ իրենց պատասխանատվությունը չհասկանալու մեջ:

Երեխան ընտանիքում է սկսում եւ անցկացնում իր կյանքի մեծ մասը: Այստեղից էլ կարեւորվում է այն խնդիրը, թե նա ինչպիսի դաստիարակություն է ստանում իր ընտանիքում: Շատ մանկավարժներ շեշտում են ծնողների հատուկ

պատրաստվածության անհրաժեշտությունը երեխայի դաստիարակության գործում:

Մեր նպատակն է հետազոտության միջոցով բարձրացնել ծնողների իրազեկվածությունը երեխաների զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ, առանձնացնել ծնողների մանկավարժական կրթության իրականացման միջոցներն ու ձեւերը դպրոցում:

Ծնողների հետ տարվող աշխատանքներում առանձնացնում ենք հետեւյալ անհրաժեշտ պայմանները

- Երեխայի ընտանիքի կենսաձեւի ուսումնասիրում
- Երեխաների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործում, այդ աշխատանքների մեջ ծնողների ներգրավում
- Ծնողների հետ վստահելի եւ գործնական հարաբերությունների հաստատում
- Երեխայի զարգացման ընթացքի մասին անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում
- Ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացում
- Ծնողներին գործնական, մանկավարժական օգնության ցուցաբերում
- Ծնողների դպրոց այցելելու պարբերականության ապահովում:

Մեր նպատակին հասնելու համար կազմակերպեցինք հանդիպումներ ծնողների հետ ՝ մանկավարժական զրույցներ ու թեմատիկ խորհրդատվություններ: Մասնավորապես կիրառեցինք <<Ինչպես դաստիարակել>>, <<Ինչպիսի ծնող եք>> թեստերը:

Ինչպես դաստիարակել թեստի արդյունքների ամփոփում.

11-15 միավոր Դուք համոզված եք, որ ձեր երեխան պիտի ապրի մի աշխարհում, որտեղ գնահատվում է խելքը, նախաձեռնողականությունը, իսկ եսասիրությունը պախարակվում է եւ պատժվում: Այդ պատճառով ձգտում եք նրա մեջ դաստիարակել ազատ մտածողություն եւ վստահություն - սեփական ուժերի հանդեպ, ինչպես նաեւ բարություն եւ ուշադրություն շրջապատի հանդեպ:

6-10 միավոր Դուք աշխատում եք ժամանակակից ծնող լինել եւ չեք ուզում,որ ձեր երեխան կուրորեն հետեւի ձեզ, բայց միշտ չէ, որ նրան ընտրության ազատություն եք տալիս: Սակայն կարեւորում եք, որ երեխան սովորի իր խնդիրներն ինքը լուծել:

5 միավոր Դուք դաստիարակում եք ձեր երեխային ձեր պատկերով ու նմանությամբ հաշվի չառնելով նրա անհատական առանձնահատկությունները: Ձեզ համար գլխավորն այն է, որ նա լսի եւ հարգի մեծերին, իսկ ինքնավստահությունը, ինքնուրույնությունը, դուք պարզապես անտեսում եք:

Ինչպիսի ծնող եք թեստի արդյունքների ամփոփում.

1-3 միավոր Ձեր երեխային դաստիարակում եք առանց նրա անհատականության հետ հաշվի նստելու: Ձեզ համար շատ կարեւոր է, որ նա լսի եւ հարգի մեծերին:

3-6 միավոր Զգտում եք, որ ձեր երեխան կուրորեն չենթարկվի ձեզ, սակայն միշտ չէ որ ազատ ընտրության հնարավորություն եք ստեղծում նրա համար:

6-10 միավոր Համոզված եք, որ ձեր զավակն ապրելու է մի աշխարհում, որտեղ գնահատվում է տաղանդն ու աշխատասիրությունը, ուստի փորձում եք նրա մեջ դաստիարակել ինքնուրույն մտածելու ունակություն:

Ծնողների վարքագիծը նշված իրավիճակներում.

1. Երեխային հնարավորություն տալ ավարտելու իր խաղը, զգուշացնելով, որ մոտենում է քնելու ժամը եւ ճիշտ ժամանակին պառկեցրեք քնելու:
2. Նախապատրաստեք երեխային քնելու՝ հեքիաթի ընթերցում, երգի ունկնդրում:
3. Երեխաների համար ապահովել հանգիստ, ջերմ մթնոլորտ, ստեղծել այնպիսի իրավիճակ, որտեղ երեխան ցույց կտա իր հնարավորությունները:
4. Երեխային ինքնավստահություն ներշնչել եւ անպայման խրախուսել լավ արարքը:

Երեխաների հետ անցկացրել ենք դաս-պարապմունքների շարք:

Դաս – 1 Թեման՝ Իմ ընտանիքը

Դասի նպատակը-արթնացնել սեր եւ հարգանք ընտանիքի անդամների հանդեպ, ձեւավորել դրական հարաբերություններ նրանց հետ, դաստիարակել հոգատարություն ընտանիքի յուրաքանչյուր անդամի հանդեպ:

Անհրաժեշտ պարագաներ- ընտանեկան լուսանկարներ, թուղթ, արհեստական ծառ:

Դասի ընթացքը- նախնական զրույց ընտանիքի մասին, բացատրել, թե որքան կարող է լինել ընտանիքը, առաջարկել հանելուկներ ընտանիքի անդամների մասին, ընդգծված վերաբերմունք ցուցաբերել ընտանիքի տարեց անդամների նկատմամբ: Խոսել ծնողների եւ տան ամենափոքր անդամների մասին: Բացատրել ընտանիքում յուրաքանչյուրի նշանակությունը, բաժանել լուսանկարներ, պատմել դրանց բովանդակությունը եւ հետեւել երեխաների վերաբերմունքին: Դասի ավարտին բոլոր նկարները կախել ծառի ճյուղերից եւ ջերմ մաղթանքներ ասել ընտանիքի անդամների վերաբերյալ:

Դաս- 2 Թեման՝ Իմ ընտանիքը

Դասի նպատակը - ձեւավորել ճիշտ պատկերացում ընտանիքի եւ նրա յուրաքանչյուր անդամի ունեցած դերի մասին: Ամրապնդել պատկերացումները ընտանիքի անդամների աշխատանքային գործունեության վերաբերյալ:

Նախապատրաստական աշխատանք - ընտանեկան նկարների դիտում, զրույց ընտանիքի անդամների, նրանց ունեցած պարտականությունների մասին:

Անհրաժեշտ պարագաներ - ընտանեկան լուսանկարներ, խրախուսանքի առարկաներ

/աստղիկներ, սմայլիկներ/:

Դասի ընթացքը-դասվարը դիմում է երեխաներին ասելով, որ այսօր անցկացնելու են մրցույթ՝ <<Ամենալավ եւ ջերմ ընտանիքը>> թեմայով: Մրցույթում հաղթելու համար անհրաժեշտ է որքան հնարավոր է հետաքրքիր ձեւով պատմեք ձեր ընտանիքի անդամների մասին որտեղ են աշխատում, ով ինչով է զբաղված տանը, ինչպես են վերաբերվում մեկը մյուսին քույր, եղբայր, տատիկ, պապիկ:

Դասի ավարտին դասվարը խրախուսանքի տարբեր միջոցներով ոգեւորում է երեխաներին:

Դաս- 4 Թեման՝ նկարիր ընտանիքիդ անդամներին

Նպատակը՝ դաստիարակել սեր եւ հարգանք ընտանիքի յուրաքանչյուր անդամի հանդեպ, ձեւավորել դրական փոխհարաբերություններ ընտանիքի անդամների միջեւ:

Անհրաժեշտ պարագաներ՝ գունավոր գունավոր մատիտներ, թուղթ, ընտանեկան լուսանկարներ:

Դասի ընթացքը՝ նախնական զրույց է տարվում եւ հարցեր ուղղվում ընտանիքի ու նրա յուրաքանչյուր անդամի մասին, դիտվում են լուսանկարներ: Առաջարկվում է նկարել իրենց ընտանիքը եւ նրա յուրաքանչյուր անդամին գործողություն կատարելիս: Առաջարկվում է երեխաներին պատմել իրենց նկարած նկարների բովանդակությունը:

Ձեւավորող փուլում ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների տարածման նպատակով իրականացվել է նաեւ խորհրդատվություն: Ծնողին փորձում էինք բերել այն համոզման, որ չպետք է ամեն ինչ դիտարկել սեփական երեխայի շահերից ելնելով, որը վերջինս կարող է հանգեցնել էգոիզմի, եսամոլության եւ այլն:

Ծնողների հետ միասին քննարկեցինք ու մշակեցինք այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնք անհրաժեշտ են ընտանիքում երեխաներին համակարգված դաստիարակության համար: Ծնողներին տվեցինք ընդհանուր խորհուրդներ երեխայի զարգացման ընթացքում առաջացող դժվարությունների հաղթահարման վերաբերյալ, առաջարկեցինք նրանց ակտիվ մասնակցություն ցուցաբերել եւ բարձրացնել իրենց հուզող հարցերը, ներկայացրեցինք երեխաների հուզական զարգացման առանձնահատկությունները, խառնվածքի տիպերը, ինչպես նաեւ տեղեկատվություն տվեցինք, թե ինչպես օգնեն ագրեսիվ, անհաշտ վարքագիծ դրսեւորող երեխաներին:

2. 4 Ստուգիչ փուլ

Ստուգիչ փուլում կազմակերպված զրույցների հարցադրումների, թեստերի արդյունքում պարզվեց որ հարստացել է ծնողների մանկավարժական գիտելիքների մակարդակը

երեխաների դաստիարակության վերաբերյալ:

Այս փուլում մեր կատարած հետազոտության արդյունքները ցույց տվեցին ,որ ծնողները կրկին լրացնելով անավարտ նախադասությունները արդեն ունեին համապատասխան պատկերացում իրենց երեխաների դաստիարակության առանձնահատկությունների մասին: Այստեղ կրկին գրանցվեցին ցածր, միջին եւ բարձր մակարդակներ:

Ի տարբերություն արձանագրող փուլի, այստեղ գերակշռում են միջին եւ բարձր մակարդակները: 18 ծնող կամ 60% ուներ բարձր մակարդակ, 9 ծնող կամ 30% միջին մակարդակ, եւ 3 ծնող կամ 10% ծնող ցածր մակարդակ: Ստուգիչ փուլի արդյունքները ներկացնում ենք գծապատկերի տեսքով:

<<Ճանաչենք երեխային նրա նկարի օգնությամբ թեստը>>, կիրառվեց նաեւ ստուգիչ փուլում ստացված արդյունքները:

Պարզեցինք, որ ծնողների հիմնական մասը չունի մանկավարժական կրթություն, չի տիրապետում երեխայի զարգացման ու դաստիարակության հիմնահարցերին Նրանք հիմնականում հենվում են դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքի վրա: Որոշ ծնողներ ինքնուրույն օգտվում են համապատասխան լրատվական աղբյուրներից՝ ամսագիր, համացանց, հեռուստատեսային հաղորդաշարեր, եւ ռադիոհաղորդումներ , գիտահանրամատչելի գրականություն եւ այլն, եւ այդ հիմքով կազմակերպում իրենց երեխաների առօրյան:

Կատարված փորձարարական հետազոտությունը հնարավորություն տվեց ծնողներին փոխանցել գիտելիքներ՝ երեխաների զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ծնողական հանդիպումները կազմակերպվում էին ծնողական ժողովների, ցերեկույթների, խորհրդատվության պրոբլեմային իրադրությունների քննարկման ձեւով: Ծնողներին ներկայացրեցինք դաստիարակության ընթացքում առաջացող որոշ դժվարությունների եւ դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ մեթոդական ցուցումներ Քննարկման թեմաներն էին «Հայրիկների դերը երեխաների գործընթացում>> դաստիարակության ընտանիքի անդամների փոխհարաբերությունների ներգործությունը երեխայի դաստիարակության վրա, երեխայի ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները դպրոցում նախադպրոցական տարիքի երեխաների սեռային դաստիարակությունը ընտանիքում եւ դպրոցում:

Այսպիսով մեր կողմից կատարած տեսական ուսումնասիրություններն փորձարարական աշխատանքի արդյունքները ցույց տվեցին, որ ուսուցչի օգնությամբ ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերումը կխթանի երեխաների ընդհանուր զարգացմանն ու համակողմանի դաստիարակությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրության եւ փորձարարական հետազոտության արդյունքում եկանք հետեւյալ եզրակացությունների.

1. Կրտսեր դպրոցական տարիքում է դրվում անձի ձեւավորման հիմքերը, որն իր տրամաբանական շարունակությունն է ունենում հետագա տարիների ընթացքում:
2. Դպրոցական տարիքը դաստիարակչական ներազդեցության նկատմամբ բարձր զգայունակության ժամանակաշրջան է: Երեխան սպունգի պես կլանում է մանկավարժների ասածներն ու արածները, որի հետեւանքով էլ կարեւորվում է մեծահասակների անձնական դրական օրինակով երեխաների դաստիարակությունը:
3. ՈՒսումնական հաստատություններում է ամրապնդվում երեխայի ընտանիքում եւ միջավայրում իրականացված սոցիալականացման գործընթացը: Դպրոց հաճախելով՝ երեխան դառնում է դասարանական կոլեկտիվի անդամ, ապրում է նրա հաջողություններով, սովորում է օգնել, հաշվի առնել ընկերների կարծիքը եւ այլն:
4. Հետազոտության ընթացքում ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերման նպատակով կազմակերպվեցին՝ ծնողների հետ գործնական հարաբերությունների ստեղծում, հոգեբանամանկավարժական գիտելիքների հարստացում, ծնողերի դպրոց այցելելու պարբերականության ապահովում, դպրոցում իրականացվող աշխատանքներին ծնողների ներգրավում՝ թեստերի, պարապմունքների, թեմատիկ սեմինարների, տոնական միջոցառումների միջոցով: Դպրոցի կայք-էջի միջոցով ծնողների տեղեկատվության ապահովում, ծնողական փորձի փոխանակում, ժամանակակից մանկավարժական մեթոդների հետ ծանոթացում ընդհանուր հարցերի կոլեկտիվ քննարկում եւ այլն:
5. Փորձարարական աշխատանքների արդյունքում զգալի բարձրացավ ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերման մակարդակը, հստակեցվեցին

երեխաների գիտելիքները, ծնողների վերաբերյալ օրինաչափությունների զարգացման վերաբերմունքը կազմակերպվող պարապմունքների եւ միջոցառումների, ներառական կրթության, ինչպես նաեւ երեխայի հասակակիցների, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների եւ այլ կարեւոր հարցերի վերաբերյալ:

Առաջարկություններ

- Դպրոցի պարտականությունն է ընտանիքին ընտանիքին լուսավորել երեխաների դաստիարակության վերաբերող հարցերի շուրջ: Դպրոցի խնդիրն է ընտանիքը դարձնել օգնական ու ընկեր ինչպես երեխայի, այնպես էլ դպրոցի համար: Դրա համար դպրոցը ոչ թե քննադատի ընտանեկան դաստիարակությունը, այլ փորձի պարզաբանել ստեղծված իրավիճակների պատճառները եւ կանխարգելի դժվարությունները:
- Դպրոցի ու ընտանիքի համագործակցության էությունը նրանում է, որ երկու կողմն էլ պետք է շահագրգռված լինեն երեխային ճանաչելու, նրա մեջ լավագույն որակներն ու հատկությունները զարգացնելու գործում: Այդ համագործակցության հիմքում պետք է ընկած լինեն փոխադարձ վստահության ու հարգանքի, փոխօգնության, համբերատարության ու հանդուրժողականության սկզբունքները: Դա կօգնի մանկավարժներին ու ծնողներին միավորել ջանքերը երեխայի մեջ այն որակների ու հատկությունների ձեւավորման ուղղությամբ, որոնք անհրաժեշտ են նրան ինքնակողմնորոշվելու եւ ինքնիրացվելու, դժվարությունները հաղթահարելու եւ անհաջողության դեպքում ինքնավերականգնվելու համար:
- Նախապես պլանավորել ու կազմակերպել մանկավարժական գործընթացի մասնակիցների փոխներգործությունները: Համագործակցային հարաբերությունների ձեւավորման համար կարեւոր է պատկերացնել դասարանական կոլեկտիվը որպես մեկ ամբողջություն, որպես մի մեծ ընտանիք, որը միաձուլվում ու հետաքրքիր կյանքով է ապրում, երբ այնտեղ առկա է մանկավարժների, ծնողների ու աշակեր գործունեությունը:
- Դպրոց-ընտանիք համագործակցության շրջանակներում պարբերաբար կազմակերպել քննարկումներ ու բանավեճեր երեխաների դաստիարակության փորձի փոխանակման շուրջ, հարց ու պատասխանի երեկոներ մասնագետի մասնակցությամբ, ծնողների համար բաց դռների օրեր եւ այլն:
- Դպրոց-ընտանիք համագործակցության անհատական ձեւերից կարեւորել նամակագրությունը կամ ծնողներին երեխայի հաջողությունների մասին տեղեկացնելու գրավոր եղանակը: Նամակի միջոցով կարելի է շնորհավորել հաջողությունների ու ձեռքբերումների համար, տեղեկացնել համատեղ աշխատանքների մասին, շնորհավորել տոների առթիվ եւ այլն: Նամակագրության գլխավոր պայմանը դրական տոնն է, շփման ուրախությունը:

- Դպրոցի եւ ընտանիքի համագործակցության ու փոխներգործության նպատակով ծնողների համար խորհրդատվություններ կազմակերպել:

  Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն ծնողին մանկավարժական տեղեկատվությամբ ապահովելն է, այլ նաեւ նրանց հուզական աջակցություն ցուցաբերելը:
- Ծնողների հետ տարվող աշխատանքի ընթացքում կիրառել ընտանեկան դաստիարակության մեջ դրականի վրա հենվելու սկզբունքը: Յուրաքանչյուր բարդ ու խնդրահարույց ընտանիքում էլ հնարավոր է գտնել թեկուզ փոքրիկ, բայց դրական մի բան, հենվել դրա վրա, ավելացնել նորը եւ հետեւողական աշխատանքներ եւ իրականացնելով արդյունավետ համագործակցություն կառուցել ու հասնել առավելագույն արդյունքների:
- Դպրոց-ընտանիք համագործակցությունը պետք է կրի շարունակական, անընդհատ եւ շղթայական բնույթ: Այն, ինչ արվում է դպրոցում, պետք է շարունակվի եւ ամրապնդվի ընտանիքում, ապա կրկին վերադառնա դպրոց:
- Դպրոց-ընտանիք համագործակցության համակարգում այսօր հիմնականում կիրառվում են դաս ծնողական ժողովները: Առավել արդյունավետ կլինի կազմակերպել համակցված ծնողական ժողովներ, որտեղ կիրականացվի ծնողների մանկավարժական լուսավորություն, կվերլուծվեն ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքները, կնախանշվեն հաջորդ ուսումնական տարվա նպատակներն ու խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Ա. Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում – Երեւան ԵՊՀ Հրատարակչություն 2018:
2. Ալեքսանդրյան Է. Ա. Մեր երեխան, նրա զարգացումն ու դաստիարակությունը, Երեւան 1991:
3. Բալայան Ա. Միջոցառումները տարրական դպրոցում, <<Զանգակ>> հր. Երեւան 2019:
4. Երիցյան Լ. Մ., Թունյան Ջ. Ե., «Կրտսեր դպրոցականի հոգեբանություն», Երևան–2018:
5. Երկխոսություններ դաստիարակության մասին, Գիրք ծնողների համար, Վ.Ն. Ստոլետովի խմբագրությամբ, Երեւան 2019:
6. Էլկոնին Դ.Բ. «Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն», Երևան, «Լույս», 2018:
7. Թոփուզյան Ա.Օ. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ.- Երեւան, Լինգվա, 2009:
8. Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. Հ., Պողոսյան Լ. Մ., Կիրակոսյան Ա. Ա., Ալեքսանյան Լ. Ֆ., Ալեքսանյան Ա. Ֆ., Մանուկյան Մ. Ռ., Մանկավարժական առողջագիտությունը տարրական դպրոցում, Երեւան 2018:
9. Ժողովրդական մանկավարժական մոտեցումներ (Ս. Տ. Վարդումյանի խմբ.-ը), «Նոյյան Տապան» հր., Երեւան, 2005:
10. Խաչատրյան Պ.Գ. - Ընտանիք եւ դաստիարակություն, «Լույս» հրատարակչություն, Երեւան, 2018:
11. Խուրշուդյան Մ. Դ. Անձի սոցիալական ապահարմարեցում եւ կիբեռսոցիալականացում, <<Հոգեկան առողջության հայկական հանդես>> 1 հր, (1), Երեւան, 2019:
12. Հովհաննիսյան Ա.Ա. Դաստիարակենք միասին, Երեւան 2018Մանկավարժության եւ հոգեբանության հիմնախնդիրներ, միջբուհական կոնսորսցիումի 1/4, /2009:
13. Մուրադյան Ռ. «Դասղեկ: Նոր մոտեցումներ դաստիարակչական աշխա-տանքներում»-Երեւան, Գիտություն, 2007:
14. Պետրովսկի Ա. Վ., Երեխաները եւ ընտանեկան դաստիարակության տակտիկան, Երեւան 2007:
15. Նախաշավիղ ամսագիր, թիվ 1, Երեւան, 2011:
16. Амонашвили Ш.А. искусство семейного воспитания, Москва 2019
17. Шнейдер Л.Б. семейная психология, Москва 2018.
18. Зверева О.Л., Кротова Т.В. 343 общение педагога с родителями, Москва 2018.
19. Соловейчик С. Л. Педагогика для всех, Москва 2006.